- *Տնտեսական ակտիվության աճի տեմպն աճել է՝ փետրվարին (ՆՏՆԺՀ) հասնելով 16.3 տոկոսի:*
- *Մարտին գները նվազեցին 1.2 տոկոսով (ՆՏՆԺՀ)՝ պայմանավորված սննդամթերքի գներով:*
- *Թանկարժեք և կիսաթանկարժեք քարերի արտահանման ծավալներն ինն անգամ ավելացավ 2024 թ. փետրվարին (ՆՏՆԺՀ):*
- *ՀՀ դրամը 2.7 տոկոսով արժևորվեց 2024թ. մարտին:*
- *Չնայած փետրվարին գրանցված պակասուրդին՝ բյուջեի ընդհանուր հաշվեկշռում պահպանվել է հավելուրդը:*
- *Բանկային հատվածի շահութաբերությունը բարձրացել է 2024թ. հունվար-փետրվար ամիսներին:*

Տնտեսական ակտիվության աճի տեմպը բարձրացավ՝ 2024 թ. փետրվարին հասնելով 16.3 տոկոսի (ՆՏՆԺՀ/ իրական արտահայտությամբ)՝ 2024 թ. հունվարի 10.7 տոկոսից (ՆՏՆԺՀ) (Գծապատկեր 1): Աճի տեմպի արագացումը պայմանավորված էր արդյունաբերական արտադրանքի թողարկման ծավալների և առևտրի կտրուկ աճով: Մշակվող արդյունաբերության (որն արդյունաբերության հիմնական ենթաճյուղն է) ոլորտում աճն արագացավ՝ հունվարի 39 տոկոսից (ՆՏՆԺՀ) հասնելով 54 տոկոսի փետրվարին, ինչը պայմանավորված էր ՆՏՆԺՀ ոսկու և թանկարժեք իրերի արտադրության ծավալների 12.2-անգամ ավելացմամբ, իսկ հանքարդյունաբերության ոլորտում աճը վերականգնվեց (5 տոկոս, ՆՏՆԺՀ), ինչը հաջորդեց հունվարին գրանցված կրճատմանը: Շինարարության ոլորտում աճը փետրվարին վերադարձավ 11.7 տոկոսի՝ նախորդ ամսում աննշան նվազումից հետո: Առևտուրը, որն ամենամեծ աճը գրանցած երկրորդ ոլորտն է, ընդլայնվեց 28.3 տոկոսով (ՆՏՆԺՀ), ինչը պայմանավորված էր մեծածախ առևտրով (ներառյալ արտահանումը): Ծառայությունների ոլորտի աճը, չհաշված առևտուրը, հասավ 6 տոկոսի (ՆՏՆԺՀ)՝ նախորդ ամսվա 4.4 տոկոսից (ՆՏՆԺՀ):

Զուտ դրամական փոխանցումները փետրվարին նվազեցին 63.3 տոկոսով (ՆՏՆԺՀ), սակայն գրեթե 4 անգամ գերազանցել են նախորդ տարվա ցուցանիշը: Դրամական փոխանցումների ներհոսքերը կրճատվել են 42.5 տոկոսով (ՆՏՆԺՀ), ինչը պայմանավորված էր Ռուսաստանից ներհոսքերի 53.5 տոկոս կրճատմամբ (Գծապատկեր 2): Արտահոսքերը նույնպես կրճատվել են 24.2 տոկոսով (ՆՏՆԺՀ), և 5.9 տոկոս նվազում է գրանցվել դեպի Ռուսաստան արտահոսքերում. Նշանակալի է, որ դեպի ԱՄՆ արտահոսքերն ավելացել են 139 տոկոսով (ՆՏՆԺՀ):

Մարտին գրանցվեց գների 1.2 տոկոս անկում (ՆՏՆԺՀ): Սա պայմանավորված էր պարենային գների 5.6 տոկոս անկմամբ (ՆՏՆԺՀ): Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը (ՀՀ ԿԲ) շարունակեց աստիճանաբար թուլացնել դրամավարկային պայմանները՝ 25 բազիսային կետով նվազեցնելով վերաֆինանսավորման դրույքաչափը (հասցնելով 8.5 տոկոսի) տնօրենների խորհրդի մարտի 12-ի նիստում (Գծապատկեր 3):

Արտահանման աճը պահպանվել է բացառիկ բարձր մակարդակում՝ պայմանավորված ոսկու և թանկարժեք զարդերի արտահանման բարձր ծավալներով: Ապրանքների արտահանման ծավալները 2024 թ. փետրվարին բարձրացավ մինչև 191.3 տոկոս (ՆՏՆԺՀ), ինչը պայմանավորված էր թանկարժեք և կիսաթանկարժեք քարերի արտահանման ծավալների ինն անգամ ավելացմամբ, ինչն էլ իր հերթին հիմնականում պայմանավորված էր ոսկու, թանկարժեք զարդերի և թանկարժեք քարեր պարունակող մասերի արտահանմամբ: Թանկարժեք և կիսաթանկարժեք քարերի արտահանման մասնաբաժինն արտահանման ընդհանուր կազմում ավելացել է՝2023 թ. փետրվարի 25 տոկոս ցուցանիշից հասնելով 75 տոկոսի՝ 2024 թ. փետրվարին: Այս բացառիկ աճը կարող է մի շարք գործոնների արդյունք լինել, այդ թվում՝ թանկարժեք իրերի արտադրության ծավալների մեծացում, ինչպես նաև աշխարհաքաղաքական գործոններով պայմանավորված՝ վերաարտահանման ծավալների ավելացում: Օգտակար հանածոների (այդ թվում՝ պղինձ) և տեքստիլ արտադրանքի արտահանման ծավալները ևս ավելացան, համապատասխանաբար, 72 և 134 տոկոսով, և 11 տոկոսային կետով նպաստեցին ընդհանուր աճին: Մնացած ապրանքային խմբերում արտահանման ծավալները կամ կրճատվել են, կամ աննշան են նպաստել արտահանման աճին: Հունվար-փետրվար ամիսներին արտահանման ընդհանուր ծավալներից 46.6 տոկոսի ուղղությունը եղել է ԱՄԷ-ն, և դա եղել է հիմնականում թանկարժեք և

Կազմեց ավագ տնտեսագետ Արմինե Մանուկյանը, amanookian@worldbank.org

կիսաթանկարժեք քարերի արտահանումը: Դեպի Ռուսաստան արտահանման մասնաբաժինը գրեթե երկուսով կրճատվեց՝ 2024 թ. հունվար-փետրվար ամիսներին հասնելով 20 տոկոսի՝ անցած տարվա նույն ժամանակահատվածի 51 տոկոսի համեմատ: Մյուս կողմից, Ռուսաստանը շարունակեց լինել ներմուծման գլխավոր աղբյուրը (58 տոկոս մասնաբաժին), որը փետրվարին աճեց 80 տոկոսով (ՆՏՆԺՀ): Սա հիմնականում պայմանավորված է եղել թանկարժեք և կիսաթանկարժեք քարերի ներմուծման ծավալների աճով: Այս ապրանքային խմբում զուտ արտահանումը փետրվարին կազմել է 400 միլիոն ԱՄՆ դոլար:

2024 թ. մարտին գրանցվել է ՀՀ դրամի զգալի արժևորում՝ տարեսկզբից գրանցված փոխարժեքի կայունության որոշակի ժամանակահատվածից հետո (Գծապատկեր 4): Մարտին ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամն արժևորվեց 2.7 տոկոսով: Միջազգային պահուստները շարունակեցին նվազել՝ 2023 թ. վերջի դրությամբ արձանագրված 3.6 միլիարդ ԱՄՆ դոլարից իջնելով 3.3 միլիարդ ԱՄՆ դոլարի՝ մարտին, և այս կերպ ներմուծման ծածկույթը հասցնելով 2.6 ամսի (Գծապատկեր 5):

2024 թ. փետրվարին գրանցվել է բյուջեի 64.9 միլիարդ ՀՀ դրամ պակասուրդ: Տարեսկզբից մինչ օրս գրանցված հաշվեկշռում գրանցվել է 3.8 միլիարդ ՀՀ դրամ հավելուրդ, ինչը պայմանավորված է հունվարին բյուջեի գերազանցված կատարողականով: Հարկային մուտքերը փետրվարին ավելացել են 9.5 տոկոսով (ՆՏՆԺՀ)՝ հիմնականում պայմանավորված ԱԱՀ-ի և եկամտային հարկի հավաքագրումների ավելացմամբ (երկուսն էլ ավելացել են 13.5 տոկոսով ՆՏՆԺՀ): Ծախսերն ավելացել են 34.7 տոկոսով (ՆՏՆԺՀ), ինչը հիմնականում պայմանավորված է կապիտալ ծախսերի գրեթե հնգապատիկ ավելացմամբ (կրկնապատկվել են հատկացումները պաշտպանական ոլորտին) և փախստականներին օգնելու նպատակով սոցիալական ոլորտին հատկացումների 47 տոկոս ավելացմամբ:

Ֆինանսական հատվածի ցուցանիշները փետրվարին պահպանել են կայունությունը: Շահութաբերությունը ըստ ակտիվների, որը բանկային համակարգի շահութաբերության ցուցիչ է, 2024 թ. փետրվարին աճել է՝ հասնելով 4.1 տոկոսի 2023 թ. դեկտեմբերի 2.7 տոկոսի համեմատ: Կապիտալի համարժեքության գործակիցը 2024 թ. փետրվարին պահպանվել է կայուն՝ 19.2 տոկոս: Չաշխատող վարկերի գործակիցը ևս բարելավվել է՝ հասնելով 2.2 տոկոսի: Բացի այդ, փետրվարին ավանդներն ավելացել են 2.1 տոկոսով (ՆԱՀ), ինչը հիմնականում պայմանավորված էր արտարժույթով արտահայտված ավանդների ավելացմամբ: Վարկերն ավելացել են ընդամենը 0.5 տոկոսով (ՆԱՀ): Թեև դրամով արտահայտված վարկերն աննշան ավելացել է, դա փոխհատուցվել է արտարժույթով արտահայտված վարկերի մեկ տոկոս նվազմամբ: Դա վարկերի դոլարիզացիայի գործակիցը նվազեցրեց՝ հասցնելով 35 տոկոսի 2024 թ. փետրվարին ի տարբերություն նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 36 տոկոս ցուցանիշի:

Կազմեց ավագ տնտեսագետ Արմինե Մանուկյանը, amanookian@worldbank.org

Գծապատկեր 1. Տնտեսական ակտիվության աճը փետրվարին ուժեղացավ՝ պայմանավորված արդյունաբերական թողարկման ծավալներով
(Տնտեսական ակտիվության ինդեքս, փոփոխությունը ՆՏՆԺՀ, %)



Աղբյուրը՝ ՀՀ վիճակագրական կոմիտե

Գծապատկեր 2. Փետրվարին զուտ դրամական փոխանցումները կրճատվեցին
(հազար ԱՄՆ դոլար)



Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ

Գծապատկեր 3. 2024 թ. մարտին գների անկումը շարունակվեց
(ՍԳՀ գնաճ, ՆՏՆԺՀ, փոփոխություն, %)



Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ

Գծապատկեր 4. Մարտին ՀՀ դրամն արժևորվեց հիմնական արժույթների նկատմամբ
(ինդեքս. 2020 թ. մարտի 2 = 100)



Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ

Կազմեց ավագ տնտեսագետ Արմինե Մանուկյանը,
amanookian@worldbank.org

Գծապատկեր 5. Միջազգային պահուստները շարունակեցին նվազել

(միլիոն ԱՄՆ դոլար

(ներմուծման ամիսներ)



Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ

Գծապատկեր 6. Բյուջեի հաշվեկշիռը գրեթե համահարթ է եղել 2024 թ. հունվար-փետրվար ամիսներին՝ ի տարբերություն անցած երկու տարիների նույն ժամանակահատվածի նշանակալի հավելուրդի

(միլիարդ ՀՀ դրամ)



Աղբյուրը՝ ՀՀ ՖՆ